Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-597-17.04.2009-ՍՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի (9 նոյեմբերի 2004 թվականի, այսուհետ՝ Օրենսգիրք) 18-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունում և 20-րդ հոդվածի 3-րդ մասում «Դատարանն» բառը փոխարինել «Դատական դեպարտամենտն» բառերով:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենսգրքի 60-րդ հոդվածի 4-րդ մասում և 63-րդ հոդվածի 5-րդ մասում «դատարանը» բառը փոխարինել «դատական դեպարտամենտը» բառերով:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Դատական դեպարտամենտը պարտավոր է երեխայի որդեգրումը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք օրվա ընթացքում այդ վճռի քաղվածքի մեկական օրինակն ուղարկել քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին՝ ըստ վճռի կայացման վայրի, և երեխաներ որդեգրել ցանկացող անձանց և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կենտրոնացված հաշվառումն իրականացնող Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազորած մարմին՝ որդեգրողին, որպես որդեգրողի թեկնածուի, ինչպես նաև որդեգրված երեխային, որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կենտրոնացված հաշվառումից հանելու համար:»:

ՀՈԴՎԱԾ 4. Օրենսգրքի 129-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Դատական դեպարտամենտը պարտավոր է երեխայի որդեգրումը վերացնելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք օրվա ընթացքում այդ վճռի քաղվածքի մեկական օրինակն ուղարկել որդեգրման պետական գրանցման վայրի քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին և երեխաներ որդեգրել ցանկացող անձանց և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կենտրոնացված հաշվառումն իրականացնող Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազորած մարմին՝ որդեգրողին, որպես երեխա որդեգրած անձի, ինչպես նաև երեխային, որպես որդեգրված երեխայի, հաշվառումից հանելու համար:»:

ՀՈԴՎԱԾ 5. Օրենսգրքի 137-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Երեխային խնամատար ընտանիք հանձնելու կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:»:

ՀՈԴՎԱԾ 6. Օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Յուրաքանչյուր երեխային պահելու համար խնամատար ընտանիքին տրամադրվող ամսական դրամական միջոցների վճարումը, ինչպես նաև երեխայի խնամքի և դաստիարակության համար խնամատար ծնողներին տրվող վարձատրությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Կառավարության սահմանած կարգով և չափով:

Յուրաքանչյուր երեխային պահելու, ինչպես նաև երեխայի խնամքի և դաստիարակության համար խնամատար ծնողների վարձատրության նպատակով տրվող դրամական միջոցների ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանարպետության պետական բյուջեի, ինչպես նաև օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:»:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ ԻԿ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2009 թվականի հոկտեմբերի 7-ի նիստում առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկությունների մասին

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
ՀՀ Կառավարություն	Օրենքի նախագծի 5-րդ հոդվածը խմբագրել և համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին:	Ընդունվել է: Հոդվածը խմբագրվել է: